ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 հուլիսի 2020 թվականի N 56

ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ՕԲՅԵԿՏՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 4-րդ կետերը՝ ***որոշում եմ.***

1. Անհատ ձեռնարկատեր Սարգիս Սարիբեկյանին տալ հանրային սննդի օբյեկտում ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվություն 2020 թվականի 3-րդ եռամսյակի՝ հուլիսի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածի համար:
2. Անհատ ձեռնարկատեր Սարգիս Սարիբեկյանին տալ համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն 2020 թվականի 3-րդ եռամսյակի՝ հուլիսի 1-ից սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածի համար:
3. Հաշվի առնելով, որ Պարետի 2020 թվականի մարտի 31-ի N 27 որոշմամբ սահմանված՝ արտակարգ դրության իրավական ռեժիմով պայմանավորված Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում տնտեսական գործունեության տեսակների նկատմամբ կիրառվող ժամանակավոր սահմանափակումների արդյունքում 2020 թվականի ապրիլի 1-ից մինչև 2020 թվականի մայիսի 17-ը ներառյալ չեն գործել նաև հանրային սննդի օբյեկտները, անհատ ձեռնարկատեր Սարգիս Սարիբեկյանի կողմից վճարված երկրորդ եռամսյակի տեղական տուրքերը համապատասխան օրերի քանակով համարել վճարված որպես երրորդ եռամսյակի տեղական տուրքեր:
4. Առաջատար մասնագետ Տաթևիկ հովհաննիսյանին՝ կատարել վերահաշվարկ:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020 թվականի հուլիսի 6
գ. Նոր Արտամետ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնք, հասցե՝ 1-ին փողոց N 107 հեռ. (+374 224) 6 21 75 էլփոստ՝ norartamet.kotayq@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 հուլիսի 2020 թվականի N 57

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐ ԱՐՏԱՄԵՏ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի դրույթներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 7-րդ գլխով սահմանված կարգով՝ ***որոշում եմ.***

1. Լևոն Ֆրունզիկի Բասենցյանին և Ռուզաննա Միքայելի Բոյաջյանին սեփականության իրավունքով պատկանող 07-047-0025-0016 ծածկագրի (վկայական N 25062020-07-0139, 0.12 հա) բնակավայրերի նշանակության բնակելի կառուցապատման հողամասին Կոտայքի մարզի Նոր Արտամետ համայնքում տրամադրել 1 փողոց N 95 հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ _____ ՅՈՒ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020 թվականի հուլիսի 10

գ. Նոր Արտամետ